ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

29.04.2021թ N 02/16.4/3529-2021

<<Հազարաշեն>> սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
պարոն Ռոբերտ ԻԳԻԹՅԱՆԻՆ
էլ. փոստի հասցե՝ hazarashen@mail.ru

Հարգելի պարոն Իգիթյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Հազարաշեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2020 թվականի մարտի 12-ին կնքվել է ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N10 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 15700000 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Հիմք ընդունելով ներկայացված կանխավճարի բանկային երաշխիքը՝ 2020 թվականի տարեվերջին Ընկերությանը վճարվել է 3925000 (երեք միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամի չափով կանխավճար, իսկ մնացած գումարը չի իրացվել և վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 25-ի N397-Ն որոշմամբ նշված ծրագրի իրականացման համար նախատեսվել է 11775000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումար:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջների՝ Պատվիրատուն 2021 թվականի ապրիլի 2-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2021 թվականի ապրիլի 23-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով (այսուհետ՝ ապահովում) ներկայացնելու

մասին (2020 թվականին ներկայացված ապահովումների ժամկետները լրացել են 2020 թվականի նոյեմբերի 13-ին): Ընկերության կողմից ներկայացվել է միայն միակողմանի հաստատված համաձայնագիր:

Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021 թվականի ապրիլի 26-ից միակողմանի լուծում է:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի «900005570115՝ նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեներից ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարների՝ հաշվետու տարվա ընթացքում վերադարձից մուտքեր» գանձապետական հաշվեհամարին փոխանցել 3925000 (երեք միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամի չափով տրամադրված կանխավճարը և վճարման հանձնարարագրի բնօրինակը կից գրությամբ ներկայացնել Պատվիրատուին:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին սույն ծանուցումը 2021 թվականի ապրիլի 29-ին կտեղադրվի www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

Հարգանքով՝

Invalid signature

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գլխավոր քարտուղար
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ՝ Հասմիկ Բաղինյան
Հեռ: 011621821